


# ՄԵԾ ԵՐԵՎՆԻ ՉՈՂԵՐՈՒ ՄՐԲԱԴԱՍՄԱՆ ՀԱՐՑԸ

Posted on January 10, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



## Դոկտոր Աբել քահանա Մանուկյանի

### «Հայ եկեղեցին Եւ Մեծ եղեռնի զոհերու սրբադասման հարցը» գրքի մասին

**Դոկտ. Արմենուհի Կոստանյան**, Մարբուրգ, Գերմանիա, 10 Դեկտեմբեր 2014

Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ Ցեղասպանության զոհերի սրբադասման հարցն առավել քան արդիական է:



Հայտնի է, որ այն քննարկվել է նաև 2013թ. սեպտեմբերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած եպիսկոպոսական ժողովում: Ցավոք տեղեկատվական բնույթի հաղորդագրություններից բացի ոչինչ չինչեց և հայության համար այսօրվան կարևոր նյութը բավարար կերպով չմեկնաբանվեց և չներկայացվեց հանրությանը: Այնուամենայնիվ այս հարցը դարձավ հանրային քննարկման առարկա, արտահայտվեցին թեր և դեմ կարծիքներ, ցավոք, առանց հիմնախնդրի մասին խորը պատկերացում ունենալու:

## Դոկտոր Աբել քահանա Մանուկյանի

### «Հայ եկեղեցին Եւ Մեծ եղեռնի զոհերու սրբադասման հարցը» գրքի մասին

**Դոկտ. Արմենուհի Կոստանյան**, Մարբուրգ, Գերմանիա, 10 Դեկտեմբեր 2014

Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ Ցեղասպանության զոհերի սրբադասման հարցն առավել քան արդիական է:



Հայտնի է, որ այն քննարկվել է նաև 2013թ. սեպտեմբերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած եպիսկոպոսական ժողովում: Ցավոք տեղեկատվական բնույթի հաղորդագրություններից բացի ոչինչ չինչեց և հայության համար այսօրվան կարևոր նյութը բավարար կերպով չմեկնաբանվեց և չներկայացվեց հանրությանը: Այնուամենայնիվ այս հարցը դարձավ հանրային քննարկման առարկա, արտահայտվեցին թեր և դեմ կարծիքներ, ցավոք, առանց հիմնախնդրի մասին խորը պատկերացում ունենալու:

Բարեբախտաբար մեր շրջապատում դեռ կան խորը աստվածաբանական գիտելիքներով օժտված նվիրյալ հոգևորականներ, ինչպիսին է Տեր Աբել քահանա Մանուկյանը, ով իր հետաքրքրական և հույժ կարևոր ուսումնասիրությամբ լրացնում է մեր հոգևոր, եկեղեցական, ինչու ոչ` նաև քաղաքական կյանքում Մեծ եղեռնի զոհերի սրբադասման վերաբերյալ եղած բացը:

Հեղինակն իր «Երկու խօսք»-ը սկսում է պատմական ակնարկով. Հետաքրքրական է, որ Ցեղասպանության զոհերի զրբադասման հարցն արժարծվել է դեռևս Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին, երբ հայ անվանի գրող Վրթանես Փափագյանը

Նամակով դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին՝ առաջարկելով Հայոց Տոնացույցի մեջ ամրագրել Ապրիլի 11 -ը (հին տոմարով)՝ իբրև «Յիշատակ 760 հայ նահատակ մտավորականների, որոնք ընկան համաշխարհային մեծ պատերազմի օրերին թրջական վայրագ սրից»։ Նախորդ դարի 70-ական թվականներից սկսած այս խնդիրը կրկին քննարկվել է Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի, Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի, Կ. Պոլսի Հայոց պատրիարք Շնորհք արք. Գալուստյանի, Տիրան արք. Ներսոյանի, Չարեհ արք. Ազնավորյանի և Մեսրոպ արք. Աշոտյանի կողմից։

Դուրս. Աբել քահանա Մանուկյանի հեղինակած գիրքը իմաստային ու բովանդակային առումով շատ խիտ և ընդգրկուն է։ Հեղինակը խորապես քննում է Ցեղասպանության նահատակների սրբադասման հարցը բարոյական, եկեղեցաբանական, աստվածաբանական, կանոնական, ծիսական տեսանկյուններից՝ տալով համակողմանի բացատրություն և սպառիչ պատասխաններ։

Մեծ եղբունի 100--ամյակը համարելով նահատակներին սրբադասելու վճռական առիթ՝ հեղինակը հռետորական հարցադրում է կատարում, թե «Ո՞վ սուրբ պիտի հռչակե Հայոց Ցեղասպանության անելի քան մեկուկես միլիոն նահատակները...Եթե ոչ Առաքելական Եկեղեցին Հայաստանեայց, որուն սուրբ աւագանին ծնունդներն էին Ապրիլեան նահատակները» (էջ 23)։ Սրբերի առկայությունը ընդունելով որպես եկեղեցու կենսունակության նշան՝ Նա օրինակ է բերում Հռոմի կաթոլիկ եկեղեցուն, որտեղ մինչ օրս շարունակվում են սրբեր և երանելիներ հռչակվել (նրանց թվում՝ 1915թ. զոհված Մարտինի հայ կաթոլիկ արքեպիսկոպոս երանելի Շուքրալլահ Իգնատիոս Մալոյանը)։

Լինելով քրիստոնեական աստվածաբանության և ավանդության խորը տեսաբան Աբել Մանուկյանն առանձին ենթաբաժիններում բացատրում է, թե ովքեր են սրբերը և ինչպես է իրականացվել սրբադասումը քրիստոնեական, մասնավորապես Հայ եկեղեցու ավանդության մեջ (էջ 28-29, 51-58)։ Հայտնի է, որ Հայ եկեղեցում սրբադասման առանձին կանոն չի պահպանվել, սակայն օրինակները հաշվի առնելով կարելի է ասել, որ սրբադասումն իրականացվել է հետևյալ պայմաններում. 1. Անձի սրբակյացությունը, 2. հավատքի համար նահատակությունը, 3. կրոնական-աստվածաբանական երկերի առկայությունը, եկեղեցանվեր ու ազգանվեր գործունեությունը։ Այս վերջին պարագայում հեղինակը որպես օրինակ ներկայացնում է նահատակ մտավորականների կերպարը խորհրդանշող Կոմիտաս վարդապետին, ում. «խորին խորհուրդով» լեցուն երգարուեստը, ինչպես նաեւ Սրբազան Պատարագը, հրաշակերտած է շատերու հոգին, աստուածային սիրով ճմլած է հայրողիներու սիրտը, անոր Տեր, ողորմեա»-ն պատճառ դարձած է անկեղծ ապաշխարութեան, քաւիչ արցունքի, ու հոգեպես վերածնած է բոլոր անոնք, որոնք թերեւս Աստուծմէ եւ ընդհանրապես մարդասիրութենէ կը հեռանային» (էջ 58)։

Ներկայացնելով Հայ եկեղեցում տոնելի սրբերի հույը հեղինակը նկատում է, որ Հայոց

Տոնացույցի մեջ վերջին սրբերն են Հովհան Ռոոտնեցին և Գրիգոր Տաթևացին: Փաստորեն 15 –րդ դարից ի վեր մենք չունենք սրբադասումներ մինչդեռ, ինչպես նշվում է գրքում մեր պատմությունը լեցուն է նահատակներով և քրիստոնեական հավատքի ճշմարիտ վկայություններով. «Եկեղեցին ի՛նքը, բառիս իսկական առումով, միասնաբար իր ժողովուրդին հետ դարձած է վկայեալ ու վկայող մարտիրոս մը, կղզեակ մը քրիստոնեական ջինջ հաւատքի՝ մահմետականութեան, այլակրօնութեան, ինչպէս նաեւ երբեմն անաստուածութեան այլամերժ ովկիանոսին մէջ: Եկեղեցին ինք մարտիրոսացած է իր ժողովուրդին հետ, ապա յառնած է հուրի եւ մոխիրներու մէջէն որպէս նոր փիւնիկ, վերստին կեանք եւ վերապրելու աննկուն ոգի բաշխելով իր հայկազուն հօտին» (Էջ 35): Ապրիլյան նահատակների սրբադասումը հեղինակը համարում է նոր ժամանակների հոգևոր և բարոյական հրամայականը: Պետականություն ունեցող հայ ժողովրդի կողմից իր գավակներին գնահատելը հոգևորից բացի ունի քաղաքական նշանակություն, այն կարևոր է ոչ միայն համագգային, այլև միջազգային առումով. «Գուցէ Հայ Եկեղեցիին կողմէ տրուած նման որոշում մը մեծապէս կը նպաստէ նաեւ Հայոց Ցեղասպանութեան վերջնական ճանաչումին եւ պահանջատիրութեան արդար լուծումին» (Էջ 73):

«Բանաւե՛ճ մը» խորագրի ներքո բարձրացվում են այնպիսի հարցեր, որոնք իսկապես բանավեճի առիթ կարող են հանդիսանալ՝ ինչեցվելով անգամ Կոմիտաս վարդապետի և Ցեղասպանության գոհերի սրբադասմանը դեմ արտահայտվողների կողմից. արդյո՞ք Մեծ Եղեռնի բոլոր նահատակներն ունեին քրիստոնյայի օրինակելի վարք, միգուցէ գոհերի մեջ կային մարդիկ, որոնք դեռևս մկրտված չէին, կամ Հայ Առաքելական Եկեղեցին ունի՞ իրավունք իր սրբերի դասի մեջ ընդգրկելու կաթոլիկ կամ ավետարանական եկեղեցիների հետևորդ հայերին և այլն: Հեղինակն անաչառորեն պատասխանում է այս և վիճահարույց այլ հարցադրումներին, համարելով, որ դրանք սերտորեն առնչվում են իրար հետ, որովհետև «Քրիստոսի սիրոյն հաւաքաբար ընդունուած արեան նահատակութեան վկայութիւնը կը կազմէ ամենուն ընդհանուր հիմքը» (Էջ 61):

«Տոմարական եւ ծիսական հարցեր» բաժնում հեղինակն անդրադառնում է այնպիսի կարևոր խնդիրների, թե ինչպես պետք է Հայ Եկեղեցին համատեղի, եթե Ապրիլի 24-ը համընկնի Մեծ Պահքին, Ավագ շաբաթվա օրերին կամ Հինասց շրջանին: Առաջնային է համարվում այն հանգամանքը, որ «անօրինակ եւ բիւրաւոր մարտիրոսներու յիշատակի տօնը պէտք է գերազանց բացառութիւն մը նկատուի եւ առանձնայատուկ տեղ մը գրաւէ մեր եկեղեցական տօնացոյցին մէջ՝ «Ապրիլ 24» հաստատուն օրով»: Իսկ այն հարցին, թե ինչպես պետք է վարվել, եթե այդ օրը համընկնի հենց Ս. Հարության տոնին հեղինակը պատասխանում է. «Անձամբ պիտի ուզեմ համոզուած ըլլալ, որ թերևս հայ ժողովուրդին համար չկայ ավելի պերճախօս վկայութիւն մը՝ քան այն փաստը, թէ Ապրիլ 24-ին, երբ քրիստոնեայ աշխարհը Յիսուսի յարութեան տօնը կը նշէ, մենք՝ հայերս ներշնչուած նոյն խորհուրդով եւ յագեցած անոր սփռած պայծառ լոյսով, կ'ոգեկոչենք 1915

թուականի Ցեղասպանութեան արհաւիրքէն վերապրած մեր ազգին իրական եւ յաղթապանձ յարութիւնը Հայաստանի Հանրապետութեան, Արցախի եւ Սփիւռքի բոլոր գաղթօճախներուն մէջ» (էջ 77):

Գրքում զետեղված են Մեծ եղեռնի նահատակ մտավորականների և Ցեղասպանության զարհուրելի տեսարաններ ներկայացնող նկարներ, որոնց շնորհիվ գիրքն ավելի խոսուն է դառնում, իսկ պատմությունն առավել քան տեսանելի: Դրանց նայելով մարմնովդ սարսուռ է անցնում. իսկ ինչպե՞ս ենք մենք այսօր պատասխանում այդ բազմաչարչար որդեկորույս հայրերին և մայրերին, իրենց ծմեռնաշունչ գարունը կորցրած հայ մանուկներին: Սրբադասումն իսկապես մեր ազգային ու եկեղեցական բարոյական պարտքն է բոլոր նրանց նկատմամբ, ում նահատակության շնորհիվ ընդհանրապես այսօր մենք հայ քրիստոնյաներ ենք:

Հուսանք, որ մերօրյա առաջնորդներն էլ նույնքան իմաստուն կգտնվեն, որքան մեր միջնադարի մեր մեծ հայրապետները հասկանալու համար Ցեղասպանության նահատակների սրբադասման կարևորությունը և «Հայ եկեղեցւոյ խորաններէն եւ ազգիս սրբազան բեմերէն տարուէ տարի 24 Ապրիլին հնչէր նուիրական «Սրբոցն Կոմիտասայ Վարդապետին եւ աւելի քան մէկուկէս միլիոն նահատակացն ազգիս Հայոց» յիշատակությունը»:

---

Դոկտ. Աբել Քիւնյ. Մանուկեան, Հայ եկեղեցին եւ Մեծ եղեռնի զոհերու սրբադասման հարցը. Հայոց Ցեղասպանութեան 100-րդ Տարելիցին Ընդառաջ, Ժընեւ, 2013:

